Հավելված
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2009թ. դեկտեմբերի 7-ի N 1033-Ն հրամանի

# ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3103 «ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

## ԳԼՈՒԽ 1.
## ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3103 «ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Միջին մասնագիտական կրթության «Մասնագետ» որակավորման աստիճանի 3103 «Անասնաբուծություն» մասնագիտությունը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշմամբ:
2. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուծություն» մասնագիտության համար մասնագիտացումներ սահմանված չէ:
3. Միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն ավարտած, պետական ամփոփիչ ատեստավորումն անցած շրջանավարտին շնորհվում է «Անասնաբույծ» որակավորում:
4. Միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականացվել հետևյալ ձևերով`
   1) առկա,
   2) հեռակա,
   3) դրսեկության (էքստեռնատ),
   4) հեռավար (դիստանցիոն):
5. Միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշմամբ սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.
   1) կրթության առկա ձևով`
      ա. միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով 3 տարի
      բ. հիմնական ընդհանուր կրթության հիմքով 4 տարի
   2) կրթության հեռակա ձևով`
      ա. միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով 4 տարի
   3) դրսեկության (էքստեռնատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերով ուսուցման տևողությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի

հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (էքստեռնատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշմամբ սահմանված կարգի որոշում է ուսումնական հաստատությունը:

6. Միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով յուրացնող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը 4284 ժամ է, առավելագույն ծավալը՝ 7020 ժամ: Հիմնական ընդհանուր կրթության հիմքով հիմնական կրթական ծրագրի յուրացման դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 52 շաբաթով:

## ԳԼՈՒԽ 2.
## ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3103 «ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

7. Միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուծություն» մասնագիտությամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքները՝

1) կազմել տարբեր տեսակի գյուղատնտեսական կենդանիների և թռչունների բոլոր սեռահասակային խմբերի համար կերաբաժիններ,

2) կատարել արտադրական գործընթացներում հանդիպող ոչ բարդ տեխնոլոգիական գործառույթներ,

3) կատարել կենդանիների կրակրման, խնամքի, համարակալման, սկզբնական անասնաբուծական հաշվառման աշխատանքներ:

8. Միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուծություն» մասնագիտությամբ մասնագետի՝ զբաղմունքների ոլորտում մասնագիտական պարտականություններն են.

1) կազմել գյուղատնտեսական կենդանիների և թռչունների տարբեր սեռահասակային խմբերի կերաբաժիններ,

2) կատարել սկզբնական անասնաբուծական հաշվառման, կենդանիների համարակալման, կերակրման, խնամքի աշխատանքներ,

3) իրականացնել ընտրասերման գործընթացին առնչվող պարզ գործառույթներ:

## ԳԼՈՒԽ 3.
## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3103 «ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

9. Միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար պետք է ապահովի՝

1) մասնագիտական գործունեության բնագավառի կարողություններն ու հմտությունները ձեռք բերելու համար պահանջվող ծավալով տեսական ու գործնական գիտելիքների յուրացում,

2) աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում աշխատանքային կոլեկտիվի անդամների և ղեկավարների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողության ձևավորում,

3) ինչպես տիպական, այնպես էլ որոշակի փոփոխվող գործոններով իրավիճակներում մասնագիտական հարցերի լուծումների տարբերակներ առաջարկելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորում,

4) մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը որոշակի սոցիալական և էթիկական հարցերի հետ որպես մեկ ամբողջություն դիտարկելու, ակտիվ քաղաքացիական գիտակցության դրսևորման կարողության ձևավորում,

5) մասնագիտական գործունեության գործառնությունները կիրառվող նորմաների սահմաններում իրականացնելու հմտությունների ձևավորում,

6) ինքնազարգացման և մասնագիտական կատարելագործման նպատակով իր և աշխատակիցների ուսումնառության կարիքները գնահատելու, դրանք իրագործելու ուղիներն առաջարկելու կարողության ձևավորում,
7) մասնագիտական և ընդհանուր բնույթի տեղեկատվության գոյություն ունեցող աղբյուրներից օգտվելու, անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք բերելու կարողության ձևավորում,
8) աշխատանքային խմբի գործունեությունը կազմակերպելու, խմբի անդամներին ուղղորդելու, նրանց անհատական հնարավորությունները գնահատելու և արդյունավետ օգտագործելու հմտությունների զարգացում,
9) ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ռազմավարական մոտեցումների տարրեր կիրառելու կարողությունների ձևավորում,
10) հայտնաբերել կենդանիների պահվածքի, կերակրման և խնամքի արտադրական ամբողջական շղթայի առանձին օղակներում ծառացած անհամապատասխանությունները (թերությունները) և, հնարավորության սահմաններում, ինքնուրույն շտկել դրանք,
11) կերաբաժինների որոշ բաղադրատարրերի բացակայության դեպքում փոխել կերաբաժինները՝ դրանցում ներառելով այդ պահին առկա կերերը կամ կերային հավելումները,
12) պարզել կենդանիների մթերատվության լիարժեք դրսևորմանը խոչընդոտող գործոնները և առաջարկություններ ներկայացնել դրանց վերացման վերաբերյալ,
13) խստորեն հետևել անասնապահական ֆերմաների օրվա աշխատակարգի սահմանված կարգով իրականացմանը և ղեկավարել կթվորների, անասնապահների և այլ սպասարկող անձնակազմի առօրյա աշխատանքը,
14) համագործակցել գործընկերների հետ և անհրաժեշտության դեպքում պատրաստակամություն ցուցաբերել իր փորձն ու գիտելիքները նրանց փոխանցելու հարցերում,
15) նախաձեռնություն ցուցաբերել գիտելիքների մակարդակը ինքնաստուգման (ինքնագնահատման) միջոցով պարզելու և ինքնուսուցման միջոցով պարբերաբար դրանք կատարելագործելու հարցերում,
16) մշտապես հարստացնել մասնագիտական կարողությունները, ձգտել յուրացնել նոր գիտելիքներ և ժամանակակից տեխնոլոգիաներ և համապատասխան քայլեր ձեռնարկել դրանք արտադրության մեջ ներդնելու ուղղությամբ:

## ԳԼՈՒԽ 4.
## ՊԱՀԱՆՋՆԵՐ 3103 «ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

10. Միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում շրջանավարտի համար պետք է ապահովի՝

1) իմանալ ՀՀ Սահմանադրության, տվյալ բնագավառի աշխատանքները, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթները,

2) տիրապետել հայոց լեզվին,

3) հաղորդակցվել երկու օտար լեզուներով,

4) պատկերացում ունենալ առողջ կենսակերպի մասին, տիրապետել ֆիզիկական կատարելագործման ունակություններին և հմտություններին,

5) դրսևորել ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի որոշակի իմացություն,

6) պատկերացում ունենալ անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների մասին,

7) իմանալ հոգեբանության, միջանձնային փոխհարաբերությունների վարվելակերպի տարրերը,

8) իմանալ տնտեսագիտության տեսության հիմնադրույթները, մակրոտնտեսության և միկրոտնտեսության օրենքները, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունները:

11. Միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում շրջանավարտի համար պետք է ապահովի՝

1) ծանոթ լինել էկոլոգիական հիմնական հասկացություններին, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրներին,

2) պատկերացում ունենալ արտակարգ իրավիճակների մասին, տիրապետել արտակարգ իրավիճակներում գործելու սկզբունքներին, ծանոթ լինել փրկարարական աշխատանքների կազմակերպման կառույցներին և փրկարարական տեխնիկային, կարողանալ օգտագործել անհատական պաշտպանության միջոցներ:

12. Միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը պետք է ըստ աղյուսակ 1-ում բերված մոդուլների ապահովի շրջանավարտի կողմից առանցքային հմտություններին տիրապետում:

13. Միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար պետք է ըստ աղյուսակ 2-ում բերված մոդուլների ապահովի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների ձեռքբերում:

## ԳԼՈՒԽ 5.
## ՊԱՀԱՆՋՆԵՐ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3103 «ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

14. Միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուժություն» մասնագիտությամբ մասնագետի պատրաստման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատություններում ուսումնական գործընթացն իրականացնում են մանկավարժական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատողները:

2) Հաստատության մանկավարժական աշխատողների կազմում ընդգրկվում են դասախոսներ, արտադրական ուսուցման վարպետներ: Դասախոսական անձնակազմի աշխատողները, որպես կանոն, պետք է ունենան իրենց կողմից ուսուցանվող դասընթացի գծով բարձրագույն մասնագիտական կրթություն: Հատուկ մասնագիտական դասընթացները պարապող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

3) Ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը կարող է ունենալ ինչպես բարձրագույն մասնագիտական, այնպես էլ միջին մասնագիտական կրթություն, մասնագիտական աշխատանքի փորձ: Առանձին մասնագիտությունների գծով ուսումնական պրակտիկան կամ նրա որոշակի մասերը կարող է վարել նաև արհեստագործական կրթություն և բավարար մասնագիտական որակավորում ունեցող արհեստավորը:

4) Արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը:

15. Միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովված լինի ուսանողի համար մատչելի տեղեկատվական նյութերով (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա), ինչն, ըստ բովանդակության պետք է համապատասխանի մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների լրիվ ցանկին: Այդ առարկաների և մոդուլների, ինչպես նաև ուսումնական գործընթացի կազմակերպման բոլոր ձևերի գծով (տեսական, գործնական պարապմունքների, ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների, կուրսային և դիպլոմային աշխատանքերի) պետք է առկա լինեն դասագրքեր, ուսումնամեթոդական, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցեր, գործնական խաղերի սցենարներ, թեստային հանձնարարականների հավաքածուներ, ալգորիթմներ, մեթոդական մշակումներ, ցուցումներ, երաշխավորություններ, տեղեկատվական գրականություն, դիտողական նյութեր, ուսուցման տեխնիկական միջոցներ, ինչպես նաև միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման նյութեր:

16. Միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող կազմակերպության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Ուսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝

ա. հայոց լեզվի և խոսքի մշակույթի,

բ. օտար լեզվի,

գ. մաթեմատիկայի,

դ. իրավունքի հիմունքների,

ե. մասնավոր անասնաբուծության, գյուղատնտեսական կենդանիների և թռչունների ցեղերի ուսումնասիրության,

զ. գյուղատնտեսական կենդանիների կերակրման,

է. անասնաբուծության մեջ օգտագործվող գործիքների և սարքավորումների,

ը. համակարգչային,

թ. աշխատանքի անվտանգության:

2) Ուսումնական լաբորատորիաների երաշխավորվող ցանկը՝

ա. կերերի քիմիական կազմի որոշման,

բ. անասնաբուծական մթերքների և հումքի,

գ. գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման:

3) Սպորտային համալիր՝

ա. մարզադահլիճ,

բ. մարզահրապարակ,

Կրթական ծրագիր իրականացնող կազմակերպությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ:

17. Միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանզանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները:

2) Ուսումնառության ընթացքում ուսանողի բեռնվածությունը պարտադիր լսարանային պարապմունքներով չպետք է գերազանցի շաբաթական 36 ժամը, ինչը նաև ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալն է, ընդ որում՝ նշված ծավալը չի ներառում նախասիրական առարկաների պարապմունքները, խորհրդատվությունները և լրացուցիչ արտալսարանային պա-րապմունքները:

3) Ոէսումնական խմբի համար սահմանվում են խորհրդատվության ժամեր յուրաքանչյուր ուսումնա-կան տարում մինչև 100 ժամ:

4) Ոէսումնական տարվա սկիզբը և ավարտը բոլոր կուրսերում որոշվում է ուսումնական պլաններով:

5) Նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (ոչ ավել, քան շաբաթական 4 ժամ՝ առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

6) Հեռակա ձևով ուսուցման դեպքում ուսումնական տարվա ընթացքում դասախոսների հետ ուսանողների պարապմունքների ծավալը պետք է կազմի ոչ պակաս, քան 160 ժամ:

18. Միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի որոշակի մասի ուսուցումն իրականացվում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաների ձևով: Պրակտիկաների ընթացքում ուսանողները կատարելագործում են իրենց գործնական հմտությունները:

2) Պրակտիկայի տևողությունը սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով:

3) Պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում են ուսումնական հաստատությունները:

4) Պրակտիկաների անցկացումը վարում են արտադրական ուսուցման վարպետները, դասախոսները:

5) Ոէսումնական պրակտիկաներն անց են կացվում պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում ու տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական, ուսումնա-արտադրական արհեստանոցներում, ուսումնական տնտեսություններում, ուսումնափորձնական տեղամասերում, ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև արտադրական կազմակերպություններում, հաստատություններում :

6) Արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

19. Միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու ընթացքում ուսանողների միջանկյալ և ամփոփիչ ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսուցման ընթացքը վերահսկելու և արդյունքների ձեռքբերումը գնահատելու նպատակով անց է կացվում ուսանողների միջանկյալ ատեստավորում, իսկ որակավորում շնորհելու համար՝ շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորում:

2) Միջանկյալ ատեստավորում կարող է անցկացվել ինչպես ուսումնական կիսամյակի ընթացքում այնպես էլ վերջում:

3) Ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ներառվող նյութի ծավալի և ժամկետների մասին:

4) Միջանկյալ ատեստավորման համար ընտրված ուսումնական նյութը չի կարող ավելին լինել երկու անընդմեջ կիսամյակների նյութից:

5) Շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով:

6) Պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա համոզվել սույն չափորոշչով 3103 «Անասնաբուժություն» մասնագիտությամբ մասնագետի համար սահմանված պահանջներին շրջանավարտի համապատասխանության մեջ:

## ԳԼՈՒԽ 6.
## ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3103 «ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

20. Միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացվում է համաձայն աղյուսակ 3-ում բերված օրինակելի ուսումնական պլանի:

21. Միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնող կազմակերպությունը օրինակելի ուսումնական պլանը կիրառելիս՝

1) սույն չափորոշչով սահմանված օրինակելի ուսումնական պլանի հիման վրա կազմում և հաստատում է աշխատանքային ուսումնական պլանը,

2) աշխատանքային ուսումնական պլանը կազմելիս կարող է մինչև 5% չափով փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը,

3) կարող է փոփոխել առանձին առարկաների և մոդուլների ծրագրային նյութի բովանդակությունը 15%-ի սահմաններում՝ չփոփոխելով արդյունքները և կատարման չափանիշները,

4) առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշում է տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,

5) պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշում է ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,

6) մասնագիտական առարկաների և մոդուլների ուսումնական ծրագրերը կազմելիս հաշվի է առնում գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,

7) ընտրում է շրջանավարտների՝ սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերից մեկը:

Աղյուսակ 1

Միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուծություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլներ

| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ» | |
|---|---|
| **Մոդուլի դասիչը** | ԱՀՀ -4-08-001 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը նախատեսված է նրանց համար, ովքեր կարիք ունեն զարգացնելու և ամրապնդելու հաղորդակցության իրենց ունակությունները: Մոդուլը կարելի է սովորել ոչ միայն մասնագիտական ուսումնառությանը զուգընթաց, այլև առանձին, քանի որ այն պարունակում է նաև ընդհանուր կրթության և անձի զարգացման համար կարևոր տարրեր: Սա նշանակում է, որ դասավանդողները պիտի խրախուսեն տարբեր մոտեցումներ բացահայտելու հնարավորությունները, ինչպես օրինակ` դերային խաղեր, տեսանյութեր, մամուլի ուսումնասիրություն և այլն: Ավարտելով այս մոդուլը` ուսանողը կզարգացնի հաղորդակցության կարևոր ունակություններ, ձեռք կբերի ինքնավստահություն, որպեսզի կարողանա արդյունավետ և ակտիվ կերպով հաղորդակցվել աշխատանքնային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև` անձնական կյանքում: |
| **Մոդուլի տևողությունը** | 54 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Չկան |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Սահմանել ուսումնառության անձնական նպատակները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները,<br>բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները,<br>գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները |
| **Ուսումնառության արդյունք 2** | Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին |
| **Կատարման չափանիշներ** | ա. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք,<br>բ. հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ,<br>գ. տեղեկատվության առանձնացում/խմբավորումը նպատակային է կատարում,<br>դ. հաղորդումը իրականացնում է` հաշվի առնելով իրավիճակը և լսարանը: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները, (պարզաբանումներ ստանալու ձգտումը, գրառումներ կատարելը, ամփոփելը),<br>բ. ազատ կերպով ձևակերպում, արտահատում և պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները,<br>գ. ցուցաբերում է համոզելու հատկություն,<br>դ. կատարում է ճիշտ ամփոփում/եզրափակում: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է նախանշում սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները,<br>բ. մեկնաբանման համար օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք: |
| **Ուսումնառության արդյունք 5** | Կատարել փաստաթղթավարում |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը` ըստ նրանց նշանակության,<br>բ. ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղը և դերը, |

| | |
|---|---|
| | գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»** | |
| Մոդուլի դասիչը | ԱԱՕ-4-08-001 |
| Մոդուլի նպատակը | Այս մոդուլը մշակվել է արտադրական կազմակերպություններում աշխատանքի անվտանգության վերաբերյալ ուսանողներին գիտելիքներ, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման հմտություններ տալու համար: Այն անհրաժեշտ է արտադրական ձեռնարկության բոլոր մակարդակների աշխատողներին: |
| Մոդուլի տևողությունը | 36 ժամ |
| Մուտքային պահանջները | Չկան |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Իմանալ աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները |
| Կատարման չափանիշներ | ա. տիրապետում է աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը և օրենքները,<br>բ. տիրապետում է կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերին,<br>գ. ներկայացնում է աշխատանքի պաշտպանության կանոնների խախտման դեպքում պատասխանատվությունը,<br>դ. կարողանում է կատարել աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները,<br>ե. կարողանում է կատարել արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը,<br>զ.կարողանում է կատարել արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ: |
| Ուսումնառության արդյունք 2 | Իմանալ կազմակերպություններում անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները |
| Կատարման չափանիշներ | ա. տիրապետում է տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների, փոխադրամիջոցների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները,<br>բ. կարողանում է պահպանել էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը,<br>գ. կարողանում է պահպանել հրդեհաանվտանգության կանոնները և պաշտպանությունը,<br>դ. պահպանում է ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները: |
| Ուսումնառության արդյունք 3 | Իմանալ արտադրական սանիտարիայի և հիգիենայի վերաբերյալ պահանջները |
| Կատարման չափանիշներ | ա. պատկերացնում է արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները,<br>բ. գիտի արտադրական միկրոկլիմայի վերաբերյալ նորմատիվային պահանջները,<br>գ. գիտի արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները,<br>դ. գիտի արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը: |
| Ուսումնառության արդյունք 4 | Իմանալ առաջին օգնության կազմակերպումը և անհրաժեշտ միջոցները |
| Կատարման չափանիշներ | ա. գիտի ճիշտ կատարել արհեստական շնչառություն,<br>բ. գիտի ճիշտ կատարել սրտի աշխատանքի վերականգնում,<br>գ. գիտի դադարեցնել արյան հոսքը և դնել վիրակապ,<br>դ. գիտի կոտրվածքների վիրակապման կարգը,<br>ե. ճիշտ է կատարում առաջին օգնությունն այրվածքների դեպքում,<br>զ. ճիշտ է կատարում առաջին օգնությունն էլեկտրահարման դեպքում: |

Այլուսակ 2

Միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուծություն» մասնագիտության
հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

| | |
|---|---|
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԵՎ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԱԲԾ-4- 08-001 |
| **Մոդուլի նպատակը** | Ուսանողը ուսումնառության ընթացքում պետք է գաղափար կազմի գյուղատնտեսական տարբեր կենդատեսակների կմախքի կառուցվածքի, ներքին սեկրեցիայի ապարատի, բազմացման օրգանների և զգայարանների գործունեությանը: |
| **Մոդուլի տևողությունը** | 72 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Չկան |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Բնութագրել խոշոր և մանր եղջերավոր կենդանիների, թռչունների անատոմիական կառուցվածը և կմախքի առանձնահատկությունները |
| **Կատարման չափանիշներ** | ա. խոշոր եղջերավոր կենդանիների անատոմիական կառուցվածքի նկարագիրը կատարված է ճիշտ,<br>բ. մանր եղջերավոր կենդանիների անատոմիական կառուցվածքի նկարագիրը կատարված է ճիշտ,<br>գ. թռչունների անատոմիական կառուցվածքի նկարագիրը կատարված է ճիշտ: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Բնութագրել կենդանիների ներքին սեկրեցիայի ապարատի գործունեությունը և առանձնահատկությունները |
| **Կատարման չափանիշներ** | ա. խոշոր եղջերավոր կենդանիների ներքին սեկրեցիայի ապարատի գործունեության առանձնահատկությունները բացահայտված են ամբողջովին և ճիշտ,<br>բ. մանր եղջերավոր կենդանիների ներքին սեկրեցիայի ապարատի գործունեության առանձնահատկությունները բացահայտված են ամբողջովին և ճիշտ,<br>գ. թռչունների ներքին սեկրեցիայի ապարատի գործունեության առանձնահատկությունները բացահայտված են ամբողջովին և ճիշտ: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Կենդանիների զգայարանների և բազմացման օրգանների ֆունկցիոնալ գործունեության առանձնահատկություններին |
| **Կատարման չափանիշներ** | ա. գիտի գյուղատնտեսական կենդանիների ներքին օրգանների գործունեության առանձնահատկությունները<br>բ. գիտի գյուղատնտեսական կենդանիների զգայարանների նշանակության և գործունեության առանձնահատկությունների վերաբերյալ լիարժեք գիտելիքներ: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԲՋՋԻՋՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԱԲԾ-4-08-002 |
| **Մոդուլի նպատակը** | Կենդանու ֆիզիոլոգիայի ուսումնասիրությունը ունի բացառիկ նշանակություն: Այն հնարավորություն է տալիս ուսումնասիրել օրգանիզմում ընթացող կենսական պրոցեսները և անհատական զարգացման առանձնահատկությունները: |
| **Մոդուլի տևողությունը** | 72 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը յուրացնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել՝ «Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների անատոմիական կառուցվածքի առանձնահատկությունները» մոդուլը: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված չափանիշների բավարար |

| | |
|---|---|
| | մակարդակի ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Բջիջների կառուցվածքը և հյուսվածքների տեսակները |
| Կատարման չափանիշներ | ա. բջիջների կառուցվածքի բազմացման և նյութափոխանակության իմացություն,<br>բ. հյուսվածքների տիպերի և կառուցվածքի իմացություն: |
| Ուսումնառության արդյունք 2 | Օրգանիզմի և արտաքին միջավայրի միջև գործող կապի առանձնահատկությունները |
| Կատարման չափանիշներ | ա. օրգանիզմի անհատական զարգացման առանձնահատկությունների տիրապետում,<br>բ. օրգանիզմի ֆիզիոլոգիական պրոցեսների և միջավայրի միջև գործող միասնական կապի պատկերում: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈՂԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ»** | |
| Մոդուլի դասիչը | ԱԲԾ-4-08-003 |
| Մոդուլի նպատակը | Այս մոդուլը նախատեսված է Անասնաբույծ որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է տալ գիտելիքներ հողի մշակման նպատակների և խնդիրների, հողի մշակման հիմնական և մակերեսային համակարգերի, նրանց կիրառման եղանակների և ձևերի մասին, կապված բույսերի աճի և զարգացման համար համապատասխան պահանջների և հողային պայմանների ստեղծման հետ: |
| Մոդուլի տևողությունը | 50 ժամ |
| Մուտքային պահանջները | Չկան |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի գնահատման ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Կարողանում է ճիշտ շարադրել հողի մշակությանը անհրաժեշտ խնդիրները, նրանց իրականացման տեխնոլոգիական գործընթացները |
| Կատարման չափանիշներ | ա. կարողանում է հիմնավորել հողի մշակման անհրաժեշտությունը և նրա հետ կապված խնդիրները,<br>բ. կարողանում է շարադրել հողի մշակման տեխնոլոգիական գործընթացները: |
| ·ուսումնառության արդյունք 2 | Կարողանում է ներկայացնել հողի հիմնական և մակերեսային մշակումների եղանակները և ձևերը, հողային գործոնների նկատմամբ մշակաբույսերի պահանջների առանձնահատկությունները |
| Կատարման չափանիշներ | ա. տիրապետում է հողի հիմնական և մակերեսային մշակման եղանակներին,<br>բ. կարողանում է հիմնավորել գործոնների նկատմամբ մշակաբույսերի պահանջները: |
| Ուսումնառության արդյունք 3 | Կարողանում է ճիշտ բնութագրել հողի մշակման համակարգերը, նրա բաղկացուցիչ տարրերը |
| Կատարման չափանիշներ | ա. ճիշտ է շարադրում հողի մշակման համակարգերը տարբեր բնակլիմայական գոտիներում,<br>բ. կարողանում է ներկայացնել հողի նախացանքային, ցանքային և հետցանքյա գործընթացները,<br>գ. ճիշտ է բնութագրում բերքահավաքին հաջորդող գործընթացները: |
| Ուսումնառության արդյունք 4 | Կարողանում է ճիշտ շարադրել ցելերի տեսակների մշակման առանձնահատկությունները |
| Կատարման չափանիշներ | ա. ճիշտ է բնութագրում ցելերի էությունը և տեսակները,<br>բ. կարողանում է ճիշտ ներկայացնել ցելերի կիրառման պայմանները,<br>գ. տիրապետում է ցելերի կատարման տեխնոլոգիաներին: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ»** | |
| Մոդուլի դասիչը | ԱԲԾ-4- 08-004 |
| Մոդուլի նպատակը | Այս մոդուլը նախատեսված «Անասնաբույծ» որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ ավտոմոբիլների, տրակտորների, գյուղատնտեսական մեքենաների, անասնապահական տեղակայանքների և սարքավորումների տեսակների, կառուցվածքի, շահագործման և տեխնիկական սպասարկումների լիարժեք կոմպլեկտավորման, աշխատանքների տեխնոլոգիական գործընթացների ձևավորման, շահագործման, ինչպես նաև պահպանում իրականացնելու կարողություններ: |

| | |
|---|---|
| Մոդուլի տևողությունը | 54 ժամ |
| Մուտքային պահանջները | Չկան |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Կարողանում է ներկայացնել մեքենաների համակարգը, և դասակարգել բուսաբուծական և անասնապահական մթերքների արտադրության տեխնոլոգիական գործընթացների համալիր մեքենայացման և ավտոմատացման միջոցները |
| Կատարման չափանիշներ | ա. կարողանում է դասակարգել բուսաբուծական և անասնապահական մթերքների արտադրության գործընթացները,<br>բ. ճիշտ է ընտրում տնտեսությանն անհրաժեշտ տեխնիկական միջոցները: |
| Ուսումնառության արդյունք 2 | Կարողանում է հստակ շարադրել գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների կառուցվածքը, տեխնիկական և շահագործական ցուցանիշները |
| Կատարման չափանիշներ | ա. ճիշտ է շարադրում մեքենաների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,<br>բ. ընտրում կամ որոշում է տեխնիկական միջոցների շահագործական ցուցանիշները: |
| Ուսումնառության արդյունք 3 | Կազմում է մեքենայական ագրեգատներ, որոշել նրանց կազմն, քանակը, վառելանյութերի և քսայուղերի տեսակը և քանակը |
| Կատարման չափանիշներ | ա. ըստ սահմանված ագրոժամկետների և աշխատանքի ծավալի որոշում է մեքենայական ագրեգատների, վառելանյութերի և քսայուղերի քանակը,<br>բ. կազմում է տրակտորների և ավտոմոբիլների ծանրաբեռնվածության գրաֆիկներ: |
| Ուսումնառության արդյունք 4 | Դասակարգում է տեխնիկական սպասարկումների տեսակները և որոշել նրանց քանակը |
| Կատարման չափանիշներ | ա. ըստ գործող չափորոշիչների որոշում է տեխնիկական սպասարկումների և նորոգումների տեսակները, քանակը և կատարման ժամկետները,<br>բ. կազմում է տրակտորների, ավտոմոբիլների, գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների աշխատանքի պլան գրաֆիկը: |
| Ուսումնառության արդյունք 5 | Կարողանում է ճիշտ շարադրել մեքենաների պահպանման եղանակները և գործընթացները |
| Կատարման չափանիշներ | ա. ճիշտ է շարադրում տեխնիկայի պահպանման դրույթներն և հրահանգները,<br>բ. ճիշտ է շարադրում բաց, փակ և կոմբինացված պահպանման եղանակների առանձնահատկությունները,<br>գ. կարողանում է պահպանման ժամանակ ընտրել խնամքի և տեխնիկական սպասարկման միջոցներ և կատարել տեխնիկական սպասարկում,<br>դ. կարողանում է պահպանման ժամանակ ձեռնարկել հակահրդեհային միջոցառումներ և ընտրել համապատասխան միջոցներ: |
| Ուսումնառության արդյունք 6 | Կարողանում է շարադրել տրակտորային ագրեգատների և ավտոմոբիլների վարման անվտանգության կանոնները |
| Կատարման չափանիշներ | ա. ճիշտ է շարադրում տրակտորների և ավտոմեքենաների վրա աշխատելու ժամանակ կիրառվող անվտանգության կանոնները,<br>բ. կարողանում հաղորդել տրակտորիստին և ավտովարորդին անհրաժեշտ հոգեֆիզիկական և հոգեկան պահանջվող հատկություններ: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ»** | |
| Մոդուլի դասիչը | ԱԲՕ-4- 08-005 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ գյուղատնտեսության վիճակագրության հիմնական հասկացությունների, մեթոդների բացարձակ և հարաբերական միջին մեծությունների, վիճակագրական |

| | |
|---|---|
| | բաշխումների, ընտրանքային դիտարկման, սոցիալ-տնտեսական երևույթների փոխադարձ կապերի, դինամիկ շարքերի, ինդեքսների և դրանց օգտագործման, վիճակագրական ցուցանիշների խմբավորման մեթոդների և տարբեր գործոնների ազդեցության պատճառա-հետևանքային կապերի վերաբերյալ: |
| Մոդուլի տևողությունը | 54 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի «Տնտեսագիտության հիմունքներ» և «Համակարգչային օպերատորության հիմունքներ» առարկաները: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողական յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Կարողանում է ճիշտ շարադրել վիճակագրական հիմնական հասկացությունները, կազմել աղյուսակներ, հաշվարկել միջին և հարաբերական մեծություններ, դինամիկ շարքեր |
| Կատարման չափանիշներ | ա. կատարում է վիճակագրական դիտարկումներ, լրացնում է վիճակագրական փաստաթղթեր,<br>բ. ճիշտ է հաշվարկում հարաբերական և բացարձակ միջին մեծությունները: |
| Ուսումնառության արդյունք 2 | Կատարում է գյուղատնտեսության հիմնական ցուցանիշների՝ բերքատվության, անասնագլխաքանակի, մթերատվության, կերերի վրա ազդող գործոնների վիճակագրական վերլուծություն |
| Կատարման չափանիշներ | Կարողանում է կատարել տնտեսության օրինակով վիճակագրական վերլուծություն՝ բացարձակ և հարաբերական վիճակագրական մեծությունների, միջին մեծությունների, վարիացիայի ցուցանիշների, ինդեքսների, դինամիկ շարքերի օգնությամբ բուսաբուծության ճյուղի և անասնաբուծության ճյուղի ցուցանիշների ուղղությամբ (ցանքատարածությունների, բերքի, բերքատվության, համախառն բերքի, հոտի վերարտադրության, մթերատվության, գլխաքանակի շարժի փոփոխությունները, դինամիկան): |
| Ուսումնառության արդյունք 3 | Կարողանում է հավաքել տեղեկատու նյութեր, կազմել ժամանակային շարքեր և կատարել դրա գնահատումը |
| Կատարման չափանիշներ | Ճիշտ է բնութագրում ժամանակային շարքը, կազմում այն և կատարում գնահատում թվային բնութագրիչների վերաբերյալ: |
| Ուսումնառության արդյունք 4 | Կարողանում է կատարել արտադրության վրա կատարված ծախսերի վրա ազդող գործոնների վերլուծությունը |
| Կատարման չափանիշներ | Ճիշտ է ներկայացնում տարբեր արտադրանքների վրա կատարվող ծախսերի կազմը, կառուցվածքը, դրանց վրա ազդող գործոնները և կարողանում է վերլուծության հիման վրա հաշվարկել յուրաքանչյուր գործոնի ազդեցության աստիճանը: |
| Ուսումնառության արդյունք 5 | Կատարում է շահույթի և շահութաբերության վրա ազդեղ ցուցանիշների վերլուծությունը |
| Կատարման չափանիշներ | Կոնկրետ տնտեսության տվյալների հիման կատարում է եկամուտների, շահույթի և շահութաբերության ցուցանիշների հաշվարկը և տարբեր գործոնների ազդեցության հետևանքով փոփոխությունները: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»** | |
| Մոդուլի դասիչը | ԱԲԾ-4- 08-006 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ ցանքաշրջանառության մեջ տարբեր մշակաբույսերի և ցելերի նշանակության, մոնոմշակաբույսի վնասակարության, նախորդող մշակաբույսի ընտրության, ցանքաշրջանառության ագրոտեխնիկայի, կերային դաշտային և հատուկ ցանքաշրջանառությունների կիրառման պայմանների, ջրովի, անջրդի և մելորացված հողերում կիրառվող ցանքաշրջանառությունների, նրանց սահմանման և նախագծման վերաբերյալ: |
| Մոդուլի տևողությունը | 50 ժամ |
| Մուտքային պահանջները | Ուսանողը նախապես պետք է տիրապետի «Երկրագործության հիմունքներ» մոդուլին |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |

| | |
|---|---|
| Ուսումնառության արդյունք 1 | Կարողանում է հիմնավորել մենամշակաբույսի վնասակարությունը և նախորդող մշակաբույսի դերը և ընտրությունը |
| Կատարման չափանիշներ | ա. ճիշտ է հիմնավորում նույն դաշտում անընդմեջ նույն մշակաբույսի մշակման վնասակարությունը,<br>բ. ճիշտ է ներկայացնում նախորդող մշակաբույսի դերը և ընտրությունը և նրանց ազդեցությունը հողի բերրիության վրա: |
| Ուսումնառության արդյունք 2 | Կարողանում է դասակարգել ցանքաշրջանառությունների տեսակները և նրանց կիրառման պայմանները |
| Կատարման չափանիշներ | ա. ճիշտ է դասակարգում ցանքաշրջանառությունների տեսակները,<br>բ. ճիշտ է ներկայացնում ցանքաշրջանառությունների կիրառման պայմանները: |
| Ուսումնառության արդյունք 3 | Կարողանում է ներկայացնել ցանքաշրջանառության ագրոտեխնիկական հիմնվորումները |
| Կատարման չափանիշներ | Ճիշտ է շարադրում ցանքաշրջանառության ագրոտեխնիկական հիմնվորումները: |
| Ուսումնառության արդյունք 4 | Կարողանում է շարադրել կերային, դաշտային և հատուկ ցանքաշրջանառությունների կիրառման, պայմանները և նշանակությունը |
| Կատարման չափանիշներ | ա. ճիշտ է ներկայացնում կերային, դաշտային և հատուկ ցանքաշրջանառությունների կիրառման պայմանները,<br>բ. ճիշտ է մեկնաբանում կերային, դաշտային և հատուկ ցանքաշրջանառությունների նշանակությունը: |
| Ուսումնառության արդյունք 5 | Կարողանում է հիմնավորել ջրովի, անջրդի և մելիորացված հողերում կիրառվող ցանքաշրջանառությունները |
| Կատարման չափանիշներ | ա. կարողանում է կազմել ջրովի և անջրդի պայմաններում կիրառվող ցանքաշրջանառությունների նախագծեր,<br>բ. ճիշտ է ներկայացնում մելորացված հողերում կիրառվող ցանքաշրջանառությունները: |
| Ուսումնառության արդյունք 6 | Կարորողանում է կազմել ցանքաշրջանառությունների նախագծեր՝ սահմանելով մասնագիտացման ուղղությունը |
| Կատարման չափանիշներ | ա.տիրապետում է ցանքաշրջանառությունների սահմանմանդրույթներին,<br>բ. կարողանում է կատարել ցանքաշրջանառությունների նախագծում: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»** | |
| Մոդուլի դասիչը | ԱԲՕ-4- 08-007 |
| Մոդուլի նպատակը | Այս մոդուլը մշակվել է հաշվի առնելով այն հանգամանքը, որ անասնապահության զարգացման գործընթացում անասնաբուժա-սանիտարական միջոցառումները խիստ անհրաժեշտ են, ուստի դրանց վերաբերյալ գիտելիքի ձեռքբերումը ունի կարևոր նշանակություն, ինչպես անասնապահական մթերքների արտադրության, այպես էլ առողջ կենդանիներ ունենալու համար: Մասնագետը պետք է ունենա ընդհանուր պատկերացումներ վարակիչ և ոչ վարակիչ, պարազիտային և ծննդագիտա-գինեկոլոգիական հիվանդությունների վերաբերյալ: |
| Մոդուլի տևողությունը | 120 ժամ |
| Մուտքային պահանջները | Մոդուլն ամբողջական յուրացնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել՝«Գյուղատնտեսական կենդանիների և թռչուններիանատոմիական կառուցվածքի առանձնահատկությունները», «Գյուղատնտեսական կենդանիների տարբեր բջիջների և հյուսվածքների կառուցվածքի առանձնահատկությունները» մոդուլները: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Անասնաբուժության ընդհանուր հիմունքների բնորոշում |
| Կատարման չափանիշներ | ա. ըստ առաջադրանքի հիմնավորել անասնաբուժության ընդհանուր հիմունքները,<br>բ. պատկերացում ունենա անասնաբուժա-սանիտարական հիմնական միջոցառումներին, անհրաժեշտության դեպքում կատարի վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների նկատմամբ կանխարգելիչ միջոցներ: |
| Ուսումնառության արդյունք 2 | Թվարկի անասնաբուժա-սանիտարական հիմնական միջոցառումները վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների նկատմամբ |
| Կատարման չափանիշներ | ա. պատկերացում ունենա անասնաբուժա-սանիտարական հիմնական միջոցառումների կիրառման անհրաժեշտությունը վարակիչ հիվանդությունների դեպքում, |

| | |
|---|---|
| | բ. պատկերացում ունենա անասնաբուժա-սանիտարական հիմնական միջոցառումների կիրառման անհրաժեշտությունը ոչ վարակիչ հիվանդությունների դեպքում,<br>գ. պատկերացում կազմի պարազիտային հիվանդությունների/ ենթամաշկային բոռ, ցիստիցերկոզ և էխինոկոկոզ/ մասին: |
| Ուսումնառության արդյունք 3 | Կարողանա գնահատել տնտեսությունում անասնաբուժական իրավիճակը և համապատասխան միջոցներ ձեռքառնել կենդանիների տարբեր հիվանդությունների նկատմամբ |
| Կատարման չափանիշներ | ա. գնահատի տնտեսությունում անասնաբուժական իրավիճակը,<br>բ. պատկերացում ունենա հեշտոցի արտանետման, վիժումների առաջացման և ընկերքի պահվելու պատճառների վերաբերյալ,<br>գ. գաղափար կազմի կրծաբորբի առաջացման, արգանդի թարախային բորբոքումների մասին,<br>դ. տարբերակում է ծննդագիտա-գինեկոլոգիական հիվանդությունները այլ հիվանդություններից: |
| Ուսումնառության արդյունք 4 | Նկարագրի վիրաբուժական և ներքին ոչ վարակիչ հիվանդությունները |
| Կատարման չափանիշներ | ա. հստակ և ճիշտ է պատկերացում գյուղատնտեսական կենդանիների առավել տարածված ներքին ոչ վարակիչ հիվանդությունները,<br>բ. կոտրվածների ու այրվածքների տիպերը բնորոշում է ճիշտ, առաջին օգնության միջոցներին տիրապետում է ամբողջովին: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ ԵՎ ՎԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ»** | |
| Մոդուլի դասիչը | ԱԲԾ-4- 08-008 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է մասնագետին տալ գիտելիքներ գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների բուժման և վարակի տարածման կանխարգելման պայքարի միջոցառումների կազմակերպման վերաբերյալ: |
| Մոդուլի տևողությունը | 72 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելու համար նախապես անհրաժեշտ է ուսումնասիրել «Անասնաբուժության հիմունքները» մոդուլը: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Կարողանում է թվարկել և կազմակերպել խոշոր եղջերավոր և մանր եղջերավոր կենդանիների ինֆեկցիոն, ինվազիոն, վիրաբուժական, գինեկոլոգիական և թերապևտիկ հիվանդությունների բուժման և վարակի տարածման կանխարգելիչ աշխատանքները |
| Կատարման չափանիշներ | ա. կարողանում է շարադրել խոշոր եղջերավոր և մանր եղջերավոր կենդանիների իֆեկցիոն հիվանդությունների ախտորոշման, բուժման և վարակի տարածման կանխարգելման աշխատանքային գործընթացները,<br>բ. կարողանում է շարադրել խոշոր եղջերավոր և մանր եղջերավոր կենդանիների ինվազիոն հիվանդությունների ախտորոշման, բուժման և վարակի տարածման կանխարգելման աշխատանքային գործընթացները,<br>գ. կարողանում է շարադրել խոշոր եղջերավոր և մանր եղջերավոր կենդանիների վիրաբուժական աշխատանքները, ծանոթ է վիրաբուժական գործիքներին, կարողանում է ճիշտ ախտորոշել և կատարել վիրահատություն,<br>դ. կարողանում է շարադրել խոշոր եղջերավոր և մանր եղջերավոր կենդանիների գինեկոլոգիական հիվանդությունների ախտորոշման, բուժման և կանխարգելման հիմնական աշխատանքները,<br>ե. կարողանում է շարադրել խոշոր եղջերավոր և մանր եղջերավոր կենդանիների թերապևտիկ հիվանդությունները, նրանց կլինիկական նշանները, ախտորոշումը և բուժումը: |
| Ուսումնառության արդյունք 2 | Կարողանում է թվարկել և կազմակերպել խոզերի ինֆեկցիոն, ինվազիոն, գինեկոլոգիական և թերապևտիկ |

| | |
|---|---|
| | հիվադությունների բուժման և վարակի տարածման կանխարգելիչ աշխատանքները |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանա արտադրական և տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վրա ազդող գործոնները և կատարի այդ գործոնների դերի վիճակագրական վերլուծություն.<br>ա. բուսաբուծության ճյուղում (ցանքատարածություններ, սերմեր, բերքատվություն),<br>բ. անասնաբուծության ճյուղում (անասնագլխաքանակ, մթերատվություն, կերեր), |

| | |
|---|---|
| | գ. ագրոտեխնիկական և տոհմային աշխատանքների կատարման վիճակագրական հիմնավորումները: |
| Կատարման չափանիշներ | Կարողանում է կատարել տնտեսության օրինակով վիճակագրական վերլուծություն՝ բացարձակ և հարաբերական վիճակագրական մեծությունների, միջին մեծությունների, վարիացիայի ցուցանիշների, ինդեքսների, դինամիկ շարքերի օգնությամբ բուսաբուծության ճյուղի և անասնաբուծության ճյուղի ցուցանիշների ուղղությամբ (ցանքատարածությունների, բերքի, բերքատվության, համախառն բերքի, հոտի վերարտադրության, մթերատվության, գլխաքանակի շարժի փոփոխությունները, դինամիկան): |
| Ուսումնառության արդյունք 3 | Իմանա գյուղատնտեսական հիմնական գործոնների վիճակագրությունը |
| Կատարման չափանիշներ | Տալ գյուղատնտեսության աշխատանքային ռեսուրսների, հիմնական ֆոնդերի, էներգետիկ ռեսուրսների կազմի և կառուցվածքի վիճակագրությունը: |
| Ուսումնառության արդյունք 4 | Իմանա վիճակագրական աշխատանքների կազմակերպման և արտադրա-տնտեսական գործունեության արդյունավետության հիմնական ցուցանիշների վիճակագրությունը |
| Կատարման չափանիշներ | Իմանա վիճակագրական աշխատանքների կազմակերպման սկզբունքները, փաստաթղթերի ներկայացման ժամկետները, արտադրա-տնտեսական գործունեության արդյունավետության հիմնական ցուցանիշների վիճակագրությունը: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ, ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԿԵՆԴԱՆԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԵՂԵՐԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԳՆԱՀԱՏՈՒՄ»** | |
| Մոդուլի դասիչը | ԱԲՕ-4- 08-025 |
| Մոդուլի նպատակը | Այս մոդուլը մշակվել է հանրապետության անասնապահական տնտեսություններում բուծվող գյուղատնտեսական կենդանիների, թռչունների և այլ կենդանատեսակների կենսաբանական առանձնահատկությունների, դրանց ճշգրիտ ճանաչելու, գնահատելու հմտություններ ձևավորելու համար: Հանրապետությունում բուծվում են գյուղատնտեսական կենդանիների տարբեր ցեղեր, որոնց ծագումնաբանական տվյալները հիմնականում բացակայում են, հիմնավոր չեն դրանց կատարելագործման ուղիները, բուծման գործընթացը կատարվում է տարերայնորեն, մայրական կազմի զուգավորման նպատակով շատ հաճախ օգտագործվում են ցածրարժեք և անհայտ ծագում ունեցող արտադրողներ: Գյուղատնտեսական կենդանիների կենսաբանական առանձնահատկությունների տիրապետումը կստեղծի իրական նախադրյալներ կենդանիների գնահատման, ընտրության և զույգընտրության գործընթացի կազմակերպման համար:<br>Մոդուլը նախատեսված է անասնաբույժ մասնագետների համար, որոնք պատրաստվում են աշխատանքներ տանել անասապահական տնտեսություններում՝ բուծվող ցեղերի կատարելագործման գործընթացում:<br>Ելնելով իրավիճակից սույն մոդուլի մշակման նպատակն է աջակցել ապագա մասնագետին նման հմտություններ ստանալու: |
| Մոդուլի տևողությունը | 72 ժամ |
| Մուտքային պահանջները | Չկան |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Գյուղատնտեսական կենդանիների ցեղերի բնութագրում |
| Կատարման չափանիշներ | ա. գյուղատնտեսական ցեղերի /տավար, ոչխար, խոզ, թռչուններ/ բնութագիրը ճիշտ է բացատրում,<br>բ. ըստ մթերատու հատկությունների և ցեղերի առանձնահատկությունների ներկայացվում է ճիշտ: |
| Ուսումնառության արդյունք 2 | Գյուղատնտեսական կենդանիների ցեղերի կենսաբանական առանձնահատկություններ |
| Կատարման չափանիշներ | ա. գյուղատնտեսական կենդանիների(տավար, ոչխար, խոզ, թռչուններ) ցեղերի կենսաբանական առանձնահատկությունները և դասակարգումը ներկայացվում են ճիշտ, |

| | |
|---|---|
| | բ. կախված կենդանու մթերատվության ուղղությունից ճիշտ է ընկալում կենդանիների կենսաբանական առանձնահատկությունները: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՃԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ: ԱՐՏԱԿԱԶՄՎԱԾՔ, ՀԱՄԱԿԱԶՄՎԱԾՔ: ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ»** | |
| Մոդուլի դասիչը | ԱԲԾ 4- 08-026 |
| Մոդուլի նպատակը | Գյուղատնտեսական կենդանիների աճի ու զարգացման օրինաչափությունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս լիարժեք կազմակերպելու բարձր մթերատու կենդանիների աճեցման գործընթացին, պատկերացում կազմել կենդանու արտակազմվածքի, առողջ համաչափ կազմվածքի մասին և ղեկավարելով աճի ու զարգացման գործընթացը, ստեղծել ցանկալի մարմնակազմով կենդանիներ, տնտեսական և բնակլիմայական տարբեր պայմանների համար: |
| Մոդուլի տևողությունը | 72 ժամ |
| Մուտքային պահանջները | Չկան |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլը համարվում է ձեռքբերված, եթե բավարարվել են արդյունքների բավարար մակարդակը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Աճի և զարգացման օրինաչափությունները և հաշվառման մեթոդները |
| **Կատարման չափանիշներ** | ա. սեռահասակային տարբեր խմբերի կենդանիների պլանավորված աճեցման, խնամքի և պահվածքի նկարագրությունը կատարում է ճիշտ,<br>բ. ճիշտ է մեկնաբանում հաշվառման մեթոդները (գծային, ծավալային, մակերեսային, կշռային) և աճի ածանցյալը մեծությունները հաշվելու կարողությունը (բացարձակ, միջին օրական և հարաբերական աճ): |
| **Ուսումնառության արդյունք 2** | Հասկացություն արտակազմվածքի և համակազմվածքի մասին արտակազմվածքի գնահատման մեթոդները |
| **Կատարման չափանիշներ** | ա. մարմնամասերի ճանաչողությունը իրատեսական է և մեկնաբանվում է ճիշտ,<br>բ. ճիշտ է ներկայացվում մարմնամասերի չափումները և գործիքների օգտագործման հմտությունները,<br>գ. ճիշտ է բնութագրում կենդանիների համակազմվածքի տիպերը և ներքնակազմվածքի վերաբերյալ մոտեցումները: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՀՎԱԾՔԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԵՎ ԽՆԱՄՔԸ»** | |
| Մոդուլի դասիչը | ԱԲԾ-4- 08-027 |
| Մոդուլի նպատակը | Այս մոդուլը մշակվել է անասնապահական ֆերմաներում բուծվող գյուղատնտեսական տարբեր կենդանատեսակների պահվածքի և խնամքի վերաբերյալ հմտություններ ձեռքբերելու համար: Գյուղատնտեսական կենդանիների պահվածքի և խնամքի տեխնոլոգիաների ճիշտ ընտրությունը անմիջականորեն կապված է կենդանու կենսաբանական առանձնահատկությունների հետ, որով և հիմնականում ձևավորվում են նրանց մթերատու հատկությունները: Դեռևս ոչ միշտ են կիրառվում կենդանիների պահվածքի արդյունավետ մեթոդներ և ձևեր, որոնք ապահովում են բարձր մթերատվություն: Կենդանիների պահվածքի որևէ ձևի կիրառումը պայմանավորված է բնակլիմայական պայմաններով, անասնաշենքերի հնարավորություններով, կերերի բազայով, արոտավայրերի՝ գյուղամերձ և հեռագնա, առկայությամբ և այլն: Քանի որ հանրապետությունում գյուղատնտեսական արտադրանքի մեջ անասնաբուծական մթերքների արտադրությունը կազմում է շուրջ 50-52%, իսկ անասնաբուծական մթերքների կառուցվածքում տավարաբուծական մթերքները կազմում են ավելի քան 70%, ուստի տավարի պահվածքի համակարգերի և խնամքի ուսումնասիրությունը ավելի է կարևորվում: Մոդուլը նախատեսված է անասնաբույժ մասնագետների համար, ովքեր պատրաստվում են անասնապահական ֆերմաներում նման աշխատանքներ կատարել:<br>Սույն մոդուլը մշակվել է այս իրողությունից ելնելով՝ ապագա մասնագետին նման հմտություններ տալու նպատակով: |

| | |
|---|---|
| Մոդուլի տևողությունը | 72 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախապես անհրաժեշտ է ուսումնասիրել «Գյուղատնտեսական կենդանիների ցեղերի կենսաբանական առանձնահատկություններ» և «Գյուղատնտեսական կենդանիների կերակրման առանձնահատկությունները» մոդուլները: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլը համարվում է ձեռքբերված, եթե բավարարվել են արդյունքների բավարար մակարդակը: |
| Ուսումնառության արդյունք 1 | Բնութագրել տավարի պահվածքի տեխնոլոգիաները և խնամքը |
| Կատարման չափանիշներ | ա. տավարի պահվածքը մսուրա-արոտային և շուրջտարյա-մսուրային համակարգերի նկարագրությունը Հայաստանում և արտերկրում բնութագրում են ճիշտ,<br>բ. տավարի պահվածքի /արտադրող-ցուլեր, կովեր, մատղաշ/ համակարգերը, ձևերը, տիպերը և խնամքի աշխատանքները ճիշտ են բնութագրվում,<br>գ. տավարի տարբեր սեռահասակային խմբերի կիրառվող պահվածքի առանձնահատկությունները, նշանակությունը անասնապահական մթերքների արտադրության գործընթացում բացատրվում են ճիշտ: |
| Ուսումնառության արդյունք 2 | Նկարագրել ոչխարի պահվածքի տեխնոլոգիաները և խնամքը |
| Կատարման չափանիշներ | ա. ոչխարի պահվածքի տեխնոլոգիաների և խնամքի վերաբերյալ պատկերացումները ձևավորված են ճիշտ,<br>բ. ոչխարի տարբեր սեռահասակային խմբերի համար պահվածի տեխնոլոգիաները և խնամքը ներկայացվում են ճիշտ: |
| Ուսումնառության արդյունք 3 | Բնութագրել խոզերի պահվածքի տեխնոլոգիաները և խնամքը |
| Կատարման չափանիշներ | ա. խոզերի ստացիոնար և կիսաստացիոնար պահվածքի տեխնոլոգիաների և խնամքի վերաբերյալ պատկերացումները ձևավորված են ճիշտ,<br>բ. խոզերի տարբեր սեռահասակային խմբերի համար պահվածի և խնամքի տեխնոլոգիաները ներկայացվում են ճիշտ: |
| Ուսումնառության արդյունք 4 | Բնութագրել թռչունների պահվածքի տեխնոլոգիաները և խնամքը |
| Կատարման չափանիշներ | ա. թռչունների վանդակային պահվածքի տեխնոլոգիայի առանձնահատկությունների վերաբերյալ բնութագրումները ձևավորված են ճիշտ,<br>բ. թռչունների հատակային պահվածի տեխնոլոգիաները ներկայացվում են ճիշտ: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԵՎ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՄԹԵՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ»** | |
| Մոդուլի դասիչը | ԱԲՕ-4- 08-028 |
| Մոդուլի նպատակը | Գյուղատնտեսական կենդանիները արտադրանք են տալիս այն ժամանակ, երբ սննդանյութերի ընդունման մակարդակը գերազանցում է կենսապահպանման պահանջը: Մթերքի գոյացման համար անհրաժեշտ սննդանյութերի մաքուր պահանջը համապատասխանում է կենդանի զանգվածի աճի, կաթի, ձվի, բրդի, պտղի /հղիության դեպքում/ մեջ դրանց պարունակությանը: Սննդանյութերի պահանջը որոշվում է մթերքի քանակով և կազմով: Գյուղատնտեսական կենդանիների արտադրանքի կազմը կայուն չէ, ուստի բոլոր փոփոխությունները պետք է հաշվի առնվեն տարբեր հասակում և ֆիզիոլոգիական վիճակում գտնվող կենդանիների կերակրման նորմաները մշակելիս:<br>Կարևորելով գյուղատնտեսական կենդանիների և թռչունների մթերատվության վրա ազդող գործոնները, որոնք հանդիսանում են նախապայման և ունեն անմիջական ազդեցություն գյուղատնտեսական արտադրանքի արդյունավետության վրա, դրանց ճիշտ կառավարումը ապագա մասնագետին հնարավորություն է տալիս հմտություններ ձեռքբերելու: |
| Մոդուլի տևողությունը | 72 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլը ուսումնասիրելու համար անհրաժեշտ է տիրապետել «Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների |

| | |
|---|---|
| | կերակրում» և «Անասնաբուծական սկզբնական հաշվառում, տոհմային հաշվառում» մոդուլներին: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի համարվում է ձեռքբերված, եթե բավարարվել են արդյունքների բավարար մակարդակը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Տավարի կաթնային և մսային մթերատվության վրա ազդող գործոնները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է բացատրում կենդանու ժառանգական անհատական առանձնահատկությունները և դրա ազդման մեխանիզը կաթնատվության և մսային մթերատվության վրա,<br>բ. ճիշտ է բացատրում կաթնային և մսային ուղղության ցեղերը ըստ դասակարգման առանձնահատկությունների,<br>գ. ճիշտ է բացատրում կաթնատու և մսատու կենդանիների կերակրումը,<br>դ. կաթնային և մսային տավարաբուծությունում ընդունված տրամախաչման մեթոդները բացատրում է ճիշտ,<br>ե. կաթնատու և մսատու տավարի պահվածքը և խնամքը ճիշտ է բացատրվում,<br>զ. կենդանու տարիքը, առաջին զուգավորման կամ առաջին ծնի տարիքը, ցամաքի և սերվիս շրջանի տևողությունը, կովերի ծնի սեզոնը ըստ բնակլիմայական գոտու պայմանների բացատրվում է ճիշտ,<br>է. ճիշտ է նկարագրում կենդանու առողջական վիճակը, կթերի քանակը օրվա ընթացքում և կովերի կթելու տեխնոլոգիան: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Խոզերի մսային մթերատվության վրա ազդող գործոնները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է բացատրում խոզերի մսային մթերատվության վրա ազդող գործոնները,<br>բ. ցեղերի ընտրություն կատարված է ճիշտ, գործոնը հիմնավորված է,<br>գ. կերակրումը, տարիքը, պահվածքի ու խնամքի գործոնները բնութագրված է ճիշտ: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Ոչխարի մսային մթերատվության վրա ազդող գործոնները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է բացատրում ոչխարի կաթնային մթերատվության վրա ազդող գործոնները,<br>բ. ոչխարի մսային մթերատվության վրա ազդող գործոնները ներկայացնում է ճիշտ,<br>գ. բրդատվության վրա ազդող գործոնները բնութագրվում են ճիշտ: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Թռչունների մթերատվության վրա ազդող գործոնները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է բացատրում թռչունների ձվատվության վրա ազդող գործոնները,<br>բ. թռչունների մսային մթերատվության վրա ազդող գործոնները ներկայացնում է ճիշտ: |
| **Ուսումնառության արդյունք 5** | Գյուղատնտեսական կենդանիների ոչ ավանդական ճյուղերի(ձիաբուծություն,այծաբուծություն, ճագարաբուծություն, գազանաբուծություն, ձկնաբուծություն և այլ) մթերատվության վրա ազդող գործոնները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է պատկերացնում ոչ ավանդական ճյուղերի՝ ձիաբուծություն, այծաբուծություն, ճագարաբուծություն, գազանաբուծություն, ձկնաբուծություն, դերը գյուղատնտեսական մթերքների արտադրության գործընթացում,<br>բ. գյուղատնտեսական կենդանիների ոչ ավանդական ճյուղերի մթերատվության վրա ազդող գործոնները բնութագրում են հանգամանորեն և ճիշտ: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԶՈՒԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՍԵՐՄՆԱՎՈՐՈՒՄ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԱԲՕ-4- 08-029 |
| **Մոդուլի նպատակը** | Գյուղատնտեսական կենդանիների մթերատու և տոհմային հատկությունների բարելավումը մեծ չափով պայմանավորված է արտադրողների որակով և հետևապես նրանց աճեցման և նպատակային օգտագործման գործի դրվածքով: Ներկայումս հանրապետությունում բուծվող գյուղատնտեսական կենդանիների ցեղերի որակական հատկությունների արագ և արդյունավետ բարելավելու միջոցներն են՝ բարձրորակ արտադրողների օգտագործումը, ինչպես արհեստական սերմնավորման, այնպես էլ զուգավորման տարբեր եղանակների կիրառմամբ: Մոդուլի մշակումը ապագա մասնագետին կըձեռի հնարավորություններ գյուղատնտեսական կենդանիների զուգավորման տարբեր եղանակների և արհեստական սերմնավորման տեխնիկայի կիրառման հմտություններ ստանալու: |
| **Մոդուլի տևողությունը** | 120 ժամ |

| | |
|---|---|
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը յուրացնելու համար ուսանողը նախապես պետք է տիրապետի «Գյուղատնտեսական կենդանիների կենսաբանական առանձնահատկություններ մոդուլը» և «Գյուղատնտեսական կենդանիների ցեղերի բուծման հնտություններ» մոդուլներին: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլը համարվում է ձեռքբերված, եթե բավարարվել են արդյունքների բավարար մակարդակը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Գյուղատնտեսական կենդանիների զուգավորման և եղանակների բնութագրում |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է պատկերացնում գյուղատնտեսական տարբեր կենդանիների զուգավորման եղանակներին,<br>բ. ճիշտ է պատկերացնում ազատ և ձեռնաքաշ զուգավորման առանձնահատկություններին,<br>գ. կատարում է ճիշտ վերլուծություններ դրանց թերությունների ու առավելությունների վերաբերյալ և կիրառում առավել առաջադիմականը,<br>դ. ճիշտ է բնութագրում անասնապահության զարգացման գործընթացում կենդանիների արհեստական սերմնավորման դերը և նշանակությունը,<br>ե. տրիապետում է արհեստական սերմնավորման մեթոդներին և ձևերին, դրա իրականացման աշխատանքներին,<br>զ. տիրապետում է արհեստական սերմնավորման իրականացման համար նախատեսված անհրաժեշտ գործիքների և պարագաների աշխատանքներին: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Գյուղատնտեսական կենդանիների վերարտադրողական հատկությունների առանձնահատկությունների բնութագրում |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է նկարագրվում տավարի վերարտադրողական հատկությունները,<br>բ. ճիշտ է նկարագրվում ոչխարի վերարտադրողական հատկությունները,<br>գ. ճիշտ է նկարագրվում խոզերի վերարտադրողական հատկությունները,<br>դ. ճիշտ է նկարագրվում թռչունների վերարտադրողական հատկությունները,<br>ե. ճիշտ է նկարագրվում գյուղատնտեսական այլ կենդանատեսակների վերարտադրողական հատկությունները: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Արհեստական սերմնավորման եղանակների և մեթոդների բնութագրումը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է բացատրում կենդանիների արհեստական սերմնավորման կարևորությունը և նշանակությունը,<br>բ. տրիապետում է արհեստական սերմնավորման մեթոդներին և ձևերին, դրա իրականացման աշխատանքներին,<br>գ. տիրապետում է արհեստական սերմնավորման իրականացման համար նախատեսված անհրաժեշտ գործիքների և պարագաների աշխատանքներին: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԲՈՒԾՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԱԲԾ 04- 08-030 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը ուսումնասիրելու դեպքում ուսանողը պատկերացում կկազմի կենդանիների ծագման, ընտանեցման ընթացքում կրած փոփոխությունների կենդանիների կյանքի տևողության, տնտեսական օգտագործման ժամկետների, զուգավորման եղանակների և բուծման մեթոդների մասին: |
| **Մոդուլի տևողությունը** | 72 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը յուրացնելու համար ուսանողը պետք է ուսումնասիրի «Կենդանիների ծագումը, ընտանեցման պրոցեսում կրած փոփոխությունները, կյանքի և տնտեսական օգտագործման ժամկետները» և «Գյուղատնտեսական կենդանիների զուգավորման եղանակներն ու բուծման մեթոդները»մոդուլներին: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլը  համարվում է ձեռքբերված, եթե բավարարվել են արդյունքների բավարար մակարդակը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Գյուղատնտեսական կենդանիների ծագումը, ընտանեցման ռնթացքում կրած փոփոխությունները, կյանքի և տնտեսական օգտագործման ժամկետները |
| **Կատարման չափանիշներ** | ա. պատկերացում կազմի ներկայիս ցեղերի և նրանց վայրի տեսակների վերաբերյալ,<br>բ. ընտանեցման ընթացքում կենդանիների կրած կենսաբանական փոփոխությունների վերաբերյալ, |

| | |
|---|---|
| | գ. տիրապետի կենդանիների կյանքի և տնտեսական օգտագործման ժամկետներին: |
| Ուսումնառության արդյունք 2 | Գյուղատնտեսական կենդանիների բուծման մեթոդները |
| Կատարման չափանիշներ | ա. տիրապետի բուծման մեթոդներին ու նրանց ձևերին,<br>բ. տիրապետի մաքրացեղ բուծման սկզբունքներին և կիրառման անհրաժեշտությունը,<br>գ. տիրապետի տրամախաչման ձևերին և իմանա երբ են դրանք կիրառվում: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆԱՍՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ»** | |
| Մոդուլի դասիչը | ԱԲԾ-4- 08-031 |
| Մոդուլի նպատակը | Հաշվառումն անասնաբուծության մեջ դա արտադրական և տոհմային ցուցանիշների գրանցման համակարգ է, որը կատարվում է անասնաբուծական տնտեսություններում և ֆերմաներում: |
| Մոդուլի տևողությունը | 72 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլը յուրացնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել՝ «Գյուղատնտեսական կենդանիների բուծման հիմունքները», «Գյուղատնտեսական կենդանիների զուգավորում և արհեստական սերմնավորում», «Գյուղատնտեսական կենդանիների աճը և զարգացումը: Արտակազմվածք, համակազմվածք: Հաշվառման մեթոդները» մոդուլները |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլը համարվում է ձեռքբերված, եթե ապահովել են արդյունքների բավարար մակարդակը: |
| Ուսումնառության արդյունք 1 | Կենդանիների համարակալման եղանակները |
| Կատարման չափանիշներ | ա. կենդանիների համարակալման աշխատանքները նկարագրվում է ճիշտ, հիմնավոր է համարակալման նշանակությունը,<br>բ. ճիշտ է պատկերացնում տարբեր տեսակի կենդանիների համարակալման ձևերը: |
| Ուսումնառության արդյունք 2 | Հաշվառման մատյանների վարում |
| Կատարման չափանիշներ | ա. կենդանու արտադրողականության, մթերատվության և տոհմային արժեք ներկայացնող ցուցանիշները բացահայտված են, գրանցումները կատարված են ճիշտ,<br>բ. գրանցումներ կատարելու կարողությունները ակնհայտ են: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿԵՐԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ, ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ՍՆՆԴԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ»** | |
| Մոդուլի դասիչը | ԱԲԾ-4- 08-031 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ գյուղատնտեսական կենդանիների և թռչունների կերակրման համար օգտագործվող կերերի, դրանց ծագման, դասակարգման և քիմիական կազմի վերաբերյալ: Մոդուլի յուրացումը հնարավորություններ կնձեռի ուսանողին պատկերացում կազմելու կերերի սննդարարության վերաբերյալ և իմանա առավել գործածական կերերի սննդարար արժեքները: |
| Մոդուլի տևողությունը | 72 ժամ |
| Մուտքային պահանջները | Մոդուլն ուսումնասիրելուց առաջ ուսանողը նախապես պետք է յուրացնի «Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների ցեղերը» և «Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների կենսաբանական առանձնահատկությունները» մոդուլները: |
| Հատուկ պահանջները | Ուսանողը պետք է զննի առավել գործածական կերերը (ֆիզիկական տեսքը) և դասախոսի հետ միասին գնահատեն ուսումնասիրված կերերը օրգանոլեպտիկ եղանակով: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլը համարվում է ձեռքբերված, եթե բավարարվել են արդյունքների բավարար մակարդակը: |
| Ուսումնառության արդյունք 1 | Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների կերակրման համար օգտագործվող կերերի տարբերակումը ըստ ծագման և դրանց դասակարգումը |
| Կատարման չափանիշներ | ա. բնութագրում է կերերը, տալիս օրգանոլեպտիկ գնահատականը և տարբերակում ըստ ծագման,<br>բ. կերերի դասակարգումը կատարում է ճիշտ: |

| | |
|---|---|
| Ուսումնառության արդյունք 2 | Սահմանել տարբեր կերերի քիմիական կազմը |
| Կատարման չափանիշներ | ա. տարբեր կերերի քիմիական կազմի վերաբերյալ ունի հստակ պատկերացում,<br>բ. բալոր կերերին բնորոշ հիմնական բաղադրատարրերի վերաբերյալ ունի ճիշտ կողմնորոշում: |
| Ուսումնառության արդյունք 3 | Տիրապետել կերերի սննդարարության գնահատման եղանակներին և գիտենալ հիմնական կերերի սննդարար արժեքները |
| Կատարման չափանիշներ | ա. տիրապետում է կերերի սննդարարության գնահտման ժամանակակից եղանակներին, ճիշտ է պատկերացնում կերերի սննդարարության գնահատման՝ կերամիավորներով և էներգետիկ արժեքով, եղանակները,<br>բ. ունի կայուն գիտելիքներ առավել տարածված հիմնական կերերի սննդարար արժեքների վերաբերյալ: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԵՎ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ ԵՎ ԿԵՐԱԲԱԺԻՆՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»** | |
| Մոդուլի դասիչը | ԱԲՕ-4- 08-032 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել անասնապահական տնտեսություններում գյուղատնտեսական կենդանիների և թռչունների տարբեր սեռահասակային խմբերի համար նախատեսված կերակրման նորմաներից օգտվելու կարողություններ, ինչպես նաև՝ տարբեր սեռահասակային խմբերի համար կերաբաժիններ կազմելու հմտություններ: |
| Մոդուլի տևողությունը | 72 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է յուրացնել «Կերերի դասակարգումը, քիմիական կազմը եւ սննդարարությունը» մոդուլը: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլը համարվում է ձեռքբերված, եթե բավարարվել են արդյունքների բավարար մակարդակը: |
| Ուսումնառության արդյունք 1 | Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների տարբեր սեռահասակային խմբերի համար կերանորմաներից օգտվելու ունակություններ և համապատասխան կերանորմերի ընտրություն |
| Կատարման չափանիշներ | ա. տիրապետում է կերակրման նորմաներին, կարողանում է օգտվել դրանցից և գյուղատնտեսական կենդանիների ու թռչունների տարբեր սեռահասակային խմբերի համար ընտրում է համապատասխան կերանորմաներ՝ հաշվի առնելով սեռը, հասակը, կենդանի զանգվածը և մթերատվության մակարդակը,<br>բ. տիրապետում է կերանորմաներին համապատասխան կերաբաժիններ կազմելու հմտություններին, |
| Ուսումնառության արդյունք 2 | Կերակրման տիպի և կերաբաժնի կառուցվածքի որոշում |
| Կատարման չափանիշներ | ա. տնտեսությունում առկա կերերի հիման վրա ընտրում է կերակրման տիպը,<br>բ. կարողանում է որոշել կերաբաժնում տարբեր կերատեսակների սննդարարությունը: |
| Ուսումնառության արդյունք 3 | Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների տարբեր սեռահասակային խմբերի համար կերաբաժիններ կազմելու հմտություններ |
| Կատարման չափանիշներ | ա. տիրապետում է գյուղատնտեսական կենդանիների տարբեր սեռահասակային խմբերի կերակրման համար անհրաժեշտ կերաբաժինների կազմման հմտություններին, կարողանում է ապահովել կերաբաժնում անհրաժեշտ կերի միավորների, ինչպես նաև սննդարար տարրերի քանակությունը,<br>բ. տիրապետում է թռչունների տարբեր սեռահասակային խմբերի կերակրման համար անհրաժեշտ կերաբաժինների կազմման հմտություններին, կարողանում է ապահովել կերաբաժնում անհրաժեշտ կերի միավորների, ինչպես նաև սննդարար տարրերի քանակությունը: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿԱԹՆԱՏՈՒ ԿՈՎԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ»** | |
| Մոդուլի դասիչը | ԱԲՕ-4- 08-033 |
| Մոդուլի նպատակը | Կաթնատու կովերի կերակրումը համարվում է անհրաժեշտ նախապայման կաթի արտադրության ավելացման գործընթացում: Լիարժեք սննդատարրերով կերակրումը նպաստում է լիակթմանը, սերնդի կանոնավոր ստացմանը: |

| | |
|---|---|
| | Կովերի ոչ ճիշտ կերակրումը հանգեցնում է մթերատվության իջեցմանը և բարձրացնում է հիվանդությունների հնարավոր վտանգը, հատկապես բարձր մթերատու կենդանիների մոտ:<br>Մոդուլի յուրացումը հնարավորություն կընձեռի ուսանողին ինքնուրույն կազմակերպելու կաթնատու կովերի կերակրման աշխատանքները: |
| **Մոդուլի տևողությունը** | 70 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը յուրացնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել «Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների կերակրման նորմաները և կերաբաժիններ կազմելու հմտություններ» և «Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների մթերատվության վրա ազդող գործոնները» մոդուլները: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլը համարվում է ձեռքբերված, եթե բավարարվել են արդյունքների բավարար մակարդակը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Տիրապետի կենդանու կենսապահովման և կաթի գոյացման, հղիության շրջանի համար անհրաժեշտ էներգիայի և պրոտեինի պահանջի հաշվարկին |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է պատկերացնում կենդանու կենսապահովման՝ անհրաժեշտ էներգիայի և պրոտեինի պահանջարկի հաշվարկի մոտեցումներին,<br>բ. ճիշտ պատկերացում ունի կաթի գոյացման և հղիության շրջանում անհրաժեշտ էներգիայի և պրոտեինի պահանջարկի վերաբերյալ: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Տիրապետի սննդանյութերով ապահովածության, հանքային նյութերի, վիտամինների և ջրի պահանջարկի վերաբերյալ հաշվավարկներին |
| **Կատարման չափանիշներ** | ա. կենդանու համար սննդանյութերով ապահովածության մոտեցումները ճիշտ են ձևակերպվում,<br>բ. հանքային նյութերի, վիտամինների և ջրի պահանջարկի վերաբերյալ հաշվավարկների ձևակերպումները ճիշտ են: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈՐԹԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ ԿԱԹՆԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԱԲՕ-4-08-034 |
| **Մոդուլի նպատակը** | Առողջ հորթերի անկորուստ աճեցումը համարվում է տավարաբուծության շահութաբերությունն ապահովող գործոններից: Կաթնային շրջանում հորթերի ճիշտ աճեցումը համարվում է նախապայման հետագայում բարձր մթերատու կենդանիներ ստանալու համար: Կովերի կաթնատվության, կաթի և մսի արտադրության ավելացումը մեծ չափով պայմանավորված է նորոգման մատղաշի ճիշտ աճեցումից, նրանց լիարժեք կերակրումից: Ճիշտ աճեցումը ապահովում է նորմալ զարգացած, ամուր համակազմվածքով, բարձր մթերատու կովերի ստացմանը: Հետևաբար մոդուլի յուրացումը կնպաստի կաթնային շրջանում ճիշտ կազմակերպել հորթերի աճեցումը: |
| **Մոդուլի տևողությունը** | 60 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը յուրացնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել «Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների կերակրման նորմաները և կերաբաժիններ կազմելու հմտություններ» և «Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների մթերատվության վրա ազդող գործոնները» մոդուլները: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլը համարվում է ձեռքբերված, եթե բավարարվել են արդյունքների բավարար մակարդակը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Տիրապետի հորթերի աճեցման ու կերակրման տեխնոլոգիաներին՝ կյանքի առաջին շաբաթում, աճեցումը կաթով կերակրելու ընթացքում |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է պատկերացնում հորթերի աճեցման ու կերակրման տեխնոլոգիաներին՝ կյանքի առաջին շաբաթում,<br>բ. ճիշտ է պատկերացնում հորթերի աճեցումը կաթով կերակրելու ընթացքում: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Տիրապետի հորթերի աճեցման կաթից վաղ անջատելու, սերզատ կաթով, լրացուցիչ կերակրման և ավտոմատ կաթնախմոցների կիրառմամբ տեխնոլոգիայի պահանջներին |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ պատկերացումներ ունի հորթերի աճեցման կաթից վաղ անջատելու տեխնոլոգիային, |

| | |
|---|---|
| | բ. ճիշտ պատկերացումներ ունի հորթերի աճեցման սերզատ կաթով, լրացուցիչ կերակրման և ավտոմատ կաթնախմոցների կիրառմամբ տեխնոլոգիայի պահանջներին: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏԱՎԱՐԻ ԲՏՈՒՄԸ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԱԲՕ 4- 08-035 |
| **Մոդուլի նպատակը** | Տավարի բտման նպատակն է ստանալ երիտասարդ, նուրբ, մարմարե միս: Հետևաբար, բտման են ենթարկում ոչ տոհմային կաթնատու կամ մասնագիտացված մսատու ցեղերի կենդանիները, ինչպես նաև դրանց խառնացեղ մատղաշը: Որպես կանոն, բտումը սկսվում է մատղաշի 120-150 կգ կենդանի զանգվածի դեպքում և ավարտվում է ըստ բտման ինտենսիվության և նպատակի: Այս մոդուլը յուրացնելուց ուսանողը կկարողանա ինքնուրույն կազմակերպել տավարի բտման աշխատանքները: |
| **Մոդուլի տևողությունը** | 62 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը յուրացնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել «Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների կերակրման նորմաները և կերաբաժիններ կազմելու հմտություններ» մոդուլը: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլը համարվում է ձեռքբերված, եթե բավարարվել են արդյունքների բավարար մակարդակը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Տիրապետի կենդանիների բտման տարբեր փուլերում կերաբաժինների կազմանը, քաշաճի հաշվարկներին |
| **Կատարման չափանիշներ** | ա. կենդանիների բտման տարբեր փուլերում կերաբաժինները ճիշտ է կազմում,<br>բ. քաշաճի հաշվարկները կատարում է ճիշտ: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Տիրապետի կենդանիների բտման ժամանակահատվածում օգտագործվող կերերի հաշվարկին |
| **Կատարման չափանիշներ** | Կենդանիների բտման ժամանակահատվածում օգտագործվող կերերի հաշվարկը կատարում է ճիշտ: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Տիրապետի տավարի տարբեր սեռահասակային կենդանիների բտման տեխնոլոգիաներին |
| **Կատարման չափանիշներ** | Տավարի տարբեր սեռահասակային կենդանիների բտման տեխնոլոգիաները ճիշտ է մեկնաբանվում: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԽՈԶԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԱԲՕ-4- 08-036 |
| **Մոդուլի նպատակը** | Խոզերի կերակրումը կազմակերպելիս առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել օգտագործվող կերերում պարունակող սննդարար նյութերը: Հատկապես հաշվի առնել պրոտեինի և անփոխարինելի ամինաթթուների բաղադրությունը: Հետևապես մթերատվության հիմնական ցուցանիշները կախված են կերերի սննդարար նյութերով ապահովվածությունից: Այս մոդուլը յուրացնելուց մասնագետը ինքնուրույն կարող է կազմակերպել խոզերի կերակրումը: |
| **Մոդուլի տևողությունը** | 60 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը յուրացնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել «Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների կերակրման նորմաները և կերաբաժիններ կազմելու հմտություններ» մոդուլը: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլը համարվում է ձեռքբերված, եթե բավարարվել են արդյունքների բավարար մակարդակը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Տիրապետի մերունների կերակրման առանձնահատկություններին |
| **Կատարման չափանիշներ** | Մերունների կերակրման առանձնահատկությունները, կերաբաժինների կառուցվածքը մեկնաբանվում են ճիշտ, |
| **Ուսումնառության արդյունք 2** | Տիրապետի խոզերի մատղաշի բտման աշխատանքների կազմակերպմանը |
| **Կատարման չափանիշներ** | Խոզերի մատղաշի բտման համար կերաբաժինները կազմված են, կազմակերպման աշխատանքները մեկնաբանվում են ճիշտ: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Տիրապետի խոզերի նորոգման մատղաշի կերակրման առանձնահատկություններին |
| **Կատարման չափանիշներ** | Խոզերի նորոգման մատղաշի աճեցման համար նախատեսված կերակրման նորմաները մեկնաբանվում են մեկնաբանվում ճիշտ, աճեցման աշխատանքների կազմակերպումը իրատեսական է: |

| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ» | |
|---|---|
| Մոդուլի դասիչը | ԱԲԾ 4- 08-037 |
| Մոդուլի նպատակը | Թռչունների մթերատվությունը կախված է ցեղից, պահվածքի խտությունից, խմբերի չափերից, նորոգման մատղաշի աճեցման համակարգից և կերակրումից: Այս մոդուլը յուրացնելուց ուսանողը ինքնուրույն պետք է իրականացնի ածան հավերի կերակրման, ճտերի և վառեկների աճեցման և հավերի մատղաշի բտման աշխատանքները:<br>Մոդուլի յուրացումը հնարավորություն կընձեռի ինքնուրույն կազմակերպել թռչունների կերակրումը: |
| Մոդուլի տևողությունը | 50 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլը յուրացնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել «Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների կերակրման նորմաները և կերաբաժիններ կազմելու հմտություններ» մոդուլը: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլը համարվում է ձեռքբերված, եթե բավարարվել են արդյունքների բավարար մակարդակը: |
| Ուսումնառության արդյունք 1 | Տիրապետի ածան հավերի կերակրման գործընթացին |
| Կատարման չափանիշներ | Ճիշտ է մեկնաբանում ածան հավերի կերակրումը, առաջարկվող կերաբաժինները տրամաբանական են: |
| Ուսումնառության արդյունք 2 | Տիրապետի ճտերի և վառեկների աճեցման աշխատանքներին |
| Կատարման չափանիշներ | Ճտերի և վառեկների աճեցման համար անհրաժեշտ կերաբաժինները կազմված են, աշխատանքների հաջորդականությունը մեկնաբանվում են ճիշտ: |
| Ուսումնառության արդյունք 3 | Տիրապետի մատղաշի բտման աշխատանքների կազմակերպմանը |
| Կատարման չափանիշներ | Մատղաշի բտման աշխատանքների կազմակերպերպումը մեկնաբանվում են ճիշտ: |
| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԻՐԱՌՎՈՂ ՈՉ ԲԱՐԴ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» | |
| Մոդուլի դասիչը | ԱԲԾ 4- 08-038 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել կարողություններ ու հմտություններ անասնապահական տնտեսություններում գյուղատնտեսական կենդանիների և թռչունների համար կիրառվող ոչ բարդ տեխնոլոգիական սարքավորումների շահագործման աշխատանքային գործառույթներին, դրանցից օգտվելու կանոնակարգին, կարողանա պատկերացնել իրականացվող գործողությունների հերթականությունը՝ պահպանելով աշխատանքի պաշտպանության ու անվտանգության տեխնիկայի կանոնները, ինչպես նաև պետք է տիրապետի այդ գործընթացների արդյունքում ստացված տարբեր տեսակի գյուղատնտեսական հումքի և մթերքների նախնական գնահատման, դասակարգման, տեսակավորման, հաշվառման եւ դրանց հաջորդող արտադրական պրոցեսների կատարման հմտություններին: |
| Մոդուլի տևողությունը | 72 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլը ուսումնասիրելիս անհրաժեշտ է յուրացնել «Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների պահվածքի տեխնոլոգիաները և խնամքը», «Արտադրական պրոցեսների մեքենայացումը անասնապահական ֆերմաներում», «Աշխատանքի անվտանգության հիմունքները» մոդուլները: |
| Հատուկ պահանջներ | Ուսանողները, դասախոսի հետ միասին, պետք է ծանոթանան մեքենայական կթի<br>ագրեգատի աշխատանքներին, խուզի մկրատի և մեքենայի կառուցվածքին, ծանոթանան կաթի պաղեցման սարքերի աշխատանքներին, զննեն ոչխարների գեղմը, դրանք գնահատվեն և դասակարգվեն: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլը համարվում է ձեռքբերված, եթե բավարարվել են արդյունքի բավարար մակարդակը: |
| Ուսումնառության արդյունք 1 | Անասնապահական տնտեսություններում և թռչնաբուծական ֆաբրիկաներում ոչ բարդ տեխնոլոգիաներում օգտագործվող գործիքների և սարքավորումների կառուցվածքի տեսական գիտելիքներ |
| Կատարման չափանիշներ | ա. պատկերացնում է անասնապահական տնտեսություններում կիրառվող տեխնոլոգիական գործընթացները,<br>բ. տիրապետում է սարքավորումների տեխնիկական բնութագրերին ու արտադրական նորմատիվներին, |

| | |
|---|---|
| | գ. տարբերակում է օգտագործվող գործիքներն ու սարքավորումները ըստ մակնիշների և գործառույթների,<br>դ. տիրապետում է դրանց շահագործման տեսական գիտելիքներին: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Կարողանա շահագործել անասնաբուծության մեջ ոչ բարդ տեխնոլոգիաներում կիրառվող գործիքներն ու սարքավորումները, պատկերացնի իրականացվող գործողությունների հերթականությունը, պահպանելով աշխատանքի պաշտպանության ու անվտանգության տեխնիկայի կանոնները: |
| **Կատարման չափանիշներ** | ա. տիրապետի կաթի պաղեցման սարքավորումների, խուզի մկրատների և սարքավորումների աշխատանքային գործընթացներին,<br>բ. տիրապետի կթի ագրեգատների աշխատանքային ռեժիմներին և անվտանգության շահագործման կանոններին,<br>գ. կարողանա անվտանգ շահագործել խուզի և կթի ագրեգատները, կաթի պաղարանները, դրան հաջորդող բոլոր գործընթացները,<br>դ. կարողանա կահավորել և ապահովել անհրաժեշտ աշխատանքային պարագաներով ոչխարների խուզի համար նախատեսված սրահը: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Տիրապետի անասնաբուծությունում ոչ բարդ տեխնոլոգիաների արդյունքում ստացված հումքի և մթերքների նախնական գնահատման, դասակարգման, թեստավորման և հաշվառման մեթոդներին: |
| **Կատարման չափանիշներ** | ա. կարողանում է օրգանոլեպտիկ եղանակով գնահատել նոր կթված կաթը, մեխանիկական մաքրման ենթարկել և տիրապետում է կաթի պաղեցման ռեժիմներին, գիտի մեքենայական կթին նախորդող և հաջորդող քայլերը,<br>բ. կարողանում է հաշվառել կթված կաթը, խուզված բուրդը,<br>գ. խուզված բուրդը կարողանում է դասակարգել, տեսակավորել և հակավորել: |

Աղյուսակ 3

Միջին մասնագիտական կրթության 3103 «Անասնաբուծություն» մասնագիտության օրինակելի ուսումնական պլան

| N | Դասընթացներ, առարկաներ և մոդուլներ | Շաբաթների թիվը | Ուսանողի առավելագույն բեռնվածությունը, ժամ | Պարտադիր լսարանային պարապմունքներ, ժամ | Ուսուցման երաշխավորվող տարին |
|---|---|---|---|---|---|
| | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ | | | | |
| 1. | Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ | | 108 | 72 | 1 |
| 2. | Տնտեսագիտության հիմունքներ | | 81 | 54 | 1 |
| 3. | Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հեմունքներ | | 81 | 54 | 1 |
| 4. | Իրավունքի հիմունքներ | | 54 | 36 | 1 |
| 5. | Պատմություն | | 81 | 54 | 1 |
| 6. | Ռուսաց լեզու | | 81 | 72 | 1 |
| 7. | Օտար լեզու | | 81 | 72 | 1 |
| 8. | Ֆիզիկական կուլտուրա | | 192 | 192 | 1 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **759** | **606** | |
| | ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ | | | | |
| 1 | Էկոլոգիայի հիմունքներ | | 54 | 36 | 1 |
| 2 | Համակարգչային օպերատորության հիմունքներ | | 81 | 54 | 1,2 |
| 3. | Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր | | 27 | 18 | 1 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **162** | **108** | |
| | ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | |
| 1 | Հաղորդակցություն | | 84 | 56 | 1 |
| 2 | Անվտանգություն և առաջին բուժօգնություն | | 54 | 36 | 1 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **138** | **92** | |
| | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ | | | | |
| 1 | Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների անատոմիական կառուցվածքի առանձնահատկությունները | | 108 | 72 | 1.2 |
| 2 | Գյուղատնտեսական կենդանիների տարբեր բջիջների և հյուսվածքների կառուցվածքի առանձնահատկությունները | | 90 | 60 | 1.2 |
| 3 | Հողի մշակման համակարգեր | | 75 | 50 | 1.2 |
| 4 | Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում | | 81 | 54 | 2 |
| 5 | Վիճակագրություն և տնտեսական գործունեության վերլուծություն | | 81 | 54 | 2 |
| 6 | Ցանքաշրջանառությունների համակարգը և նրանց առանձնահատկությունները | | 75 | 50 | 2 |
| 7 | Անասնաբուժության հիմունքներ | | 180 | 120 | 1.2.3 |
| 8 | Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների բուժման և վարակի տարածման կանխարգելում | | 81 | 72 | 2 |
| 9 | Անասնաբուժական սանիտարիայի և զոոհիգենայի հիմունքները | | 81 | 72 | 2 |
| 10 | Կերային լրացակերերը որպես կենդանիների մթերատվության բարձրացման գործոն | | 105 | 70 | 2 |
| 11 | Գյուղատնտեսական կենդանիների կերակրում և խնամք | | 102 | 68 | 2.3 |
| 12 | Անասնապահական մթերքների արտադրության տեխնոլոգիա | | 102 | 68 | 2.3 |
| 13 | Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում | | 102 | 68 | 2 |
| 14 | Անասնաբուծական ծագում ունեցող մթերքների պահպանում և վերամշակում | | 75 | 50 | 2 |
| 15 | Կերերի պահածոյացում | | 75 | 70 | 2.3 |
| 16 | Արտադրական պրոցեսների մեքենայացումը անասնապահական ֆերմաներում | | 90 | 60 | 2 |
| 17 | Գյուղատնտեսական արտադրության կառավարում | | 108 | 72 | 2 |
| 18 | Աշխատանքի անվտանգության հիմունքները | | 45 | 30 | 2 |
| 19 | Երկրագործության ընդհանուր հիմունքներ | | 54 | 36 | 2 |
| 20 | Բուսաբուծական մթերքների արտադրության տեխնոլոգիա | | 108 | 72 | 2 |
| 21 | Դաշտային մշակաբույսերի մշակության և բերքահավաքի տեխնոլոգիաները | | 108 | 72 | 2 |
| 22 | Կերային մշակաբույսերի արտադրանքի արտադրության տեխնոլոգիա | | 54 | 36 | 2 |
| 23 | Մարքետինգ և գյուղատնտեսական արտադրանքի փաթեթավորում | | 75 | 50 | 2 |
| 24 | Գյուղատնտեսական վիճակագրություն և տնտեսական գործունեության վերլուծություն | | 81 | 54 | 2.3 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **2136** | **1480** | |
| | ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ | | | | |
| 1 | Գյուղատնտեսական կենդանիների, թռչունների և այլ կենդանատեսակների ցեղերի կենսաբանական | | 108 | 72 | 2 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | առանձնահատկություններ, հմտություններ, գնահատում | | | | |
| 2 | Գյուղատնտեսական կենդանիների աճը և զարգացումը: Արտակազմվածք, համակազմվածք: Հածվառման մեթոդները | | 108 | 72 | 2 |
| 3 | Գյուղատնտեսական կենդանիների պահվածքի տեխնոլոգիաները և խնամքը | | 108 | 72 | 2 |
| 4 | Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների մթերատվության վրա ազդող գործոնները | | 108 | 72 | 2 |
| 5 | Գյուղատնտեսական կենդանիների զուգավորումը և արհեստական սերմնավորում | | 180 | 120 | 2.3 |
| 6 | Գյուղատնտեսական կենդանիների բուծման հիմունքները | | 108 | 72 | 3 |
| 7 | Անասնաբուծական սկզբնական հաշվառում | | 108 | 72 | 2.3 |
| 8 | Կերերի դասակարգումը, քիմիական կազմը և սննդարարությունը | | 108 | 72 | 2 |
| 9 | Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների կերակրման նորմաները և կերաբաժինները կազմելու հմտությունները | | 108 | 72 | 2.3 |
| 10 | Կաթնատու կովերի կերակրումը | | 105 | 70 | 3 |
| 11 | Հորթերի կերակրումը կաթնային շրջանում | | 90 | 60 | 3 |
| 12 | Տավարի բտումը | | 93 | 62 | 3 |
| 13 | Խոզերի կերակրումը | | 93 | 60 | 3 |
| 14 | Թռչունների կերակրումը | | 75 | 50 | 3 |
| 15 | Անասնաբուծության մեջ կիրառվող ոչ բարդ տեխնոլոգիաներում օգտագործվող գործիքների և սարքավորումների շահագործման հմտություններ | | 108 | 72 | 3 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 1608 | 1070 | |
| | ԸՆՏՐՈՎԻ | | 72 | 48 | |
| | ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ | | 78 | 52 | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 96 | 4611 | 3456 | |
| | ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | 300 | 300 | |
| | ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ | | | | |
| | ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ | 23 | | | |
| | ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ | 9 | | | |
| | ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ | 2 | | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 130 | | | |